

ա հաւատագու միշտինքը յայ պիտօւտամ
ու ձրմայ ուստացու ոչ է եւստամ ու ու ա. հաւարա
յի ճաշ պարզու աշա ու ու ա կառար զրացնին 191
մայս, մայս պայմա բազու մայ ճիշդ, ճամա

ՄԱՏԵՆԱԻՌՈՍՎԿԱՆ

Մ. Կորելի, Մի մանկան հոգու պատմութին. վէպիկ
ո'չ մանումների համար. ոռաերէնից թարգմանեց Տ. Վ.
Վաղարշապատ. 1902. էջ 354. զինն է 1 ր.

Անդղական կեանքից վերցրած ալս վէպի խական ա-
նունն է Հզ օր Հիւլէ—The mighty Atom—։ Մարիա Կորել-
լին ալս աշխատութեան մէջ շօշափում է Եւրոպական ալժմեան-
կեանքի ամենալուրջ խնդիրներից մէկը. արդեօք բնչ հետե-
ւանք կունենալ դաստիարակութիւնն առանց կրօնի և Աս-
տուծու գ ա ղ ա փ ա ր ի ։ Անհաւատ և անաստուած սերունդ,
կրթելու զաղափարը, որ բաւականին տարածուած է Յրան-
սիալում՝ սկսել է մուտք զործել նաև բարեպաշտ անդղիացի-
ների մէջ և անմ ալդ գաղափարի գէմ մարտնչելու համար է
շարադրուած Հզ օր Հիւլէն, Հեղինակի տենդէնցիան որոշ-
արտալայտուած է իւր հետևեալ համառօտ նախաբանի մէջ. «Ալս
զիրքն ուղղուումէ ալն մնծամիտ լառաջադիմականներին, որոնք
թէ իրենց վարդապետութեամբ և թէ օրինակով նպաստում են-
մանուկներին անհաւատ կրթելու անազնիւ գոր-
ծին և որոնք... ձգտում են արմատախիլ անել մանկական
հողուց տարրական դպրոցներում և միւս բոլոր գրադիտու-
թեան տեղերում Ա.ս տուծու ճանաչողութիւնը և սէր
առ Ա.ս տուած, որ աղնիւ կեանքի միակ, ճշմարիտ հիմքե-
րըն են, որով պատճառ են դառնում մարդասպանութիւնից
առաւել զարուրելի լանցանքիու»

Վէպի հերոսն է 11 տարեկան Լիօնէլը, որի հարուստ,
արիստոկրատիական ծագումից, բայց անհաւատ և անաստ-
ուած հալր Վ. ելիսկուրատը հաստատ որոշումն է կալացրել՝
իւր միակ որդուն դաստիարակել անկրօն և անաստուած. Գոր-
ծողութիւնը կատարուում է Կոմմօրտին ամարանոցում, Վելիս-

կուրտն յատկապէս ընտրում է ալդ առանձնաշած գիւղը, որ-
պէս զի Լիօնէլը ուրիշ երեխաների հետ յարաբերութիւն
չունենալ և պարապի գիտութիւններով իւր դաստիարակի հետ,
կարճ ժամանակից լետոյ Վելիսկուրտն արձակում է որդու-
դաստիարակին, որովհետև տեղեկանում է, որ ուսուցիչը «մին-
չև ալժմ նախապաշտուած հաւատում է քրիստոնէութիւն ա-
սուած առասպելաբանութեան, հաւատում է մի ինչ որ մտա-
ցածին Աստուծող՝ Տիեզերքի Արարչի և վերջապէս հոգու ան-
մահութեանը», նա հրաւիրում է ամբողջ Անդղիալում յարտնի-
ուսուցչապետ Կաղմօն—Հօրին, որ հռչակուած էր իրեւ խիստ
մարդ.

Լիօնէլը վեց տարեկան հասակից սկսած ալդ ուղղու-
թեամբ է դաստիարակուում. նա ընդունակ, ինելացի երեխաւ
է, ըմբռնում է ալժմ արդէն դիտութիւնները. նա ևս հօր նը-
ման չէ հաւատում Աստուծող գոլութեան և գերեզմանափոր
Ռութէնի հետ խօսելիս ասում է. «Ճայրս խիստ կրարկանար,
եթէ նորան ասէին՝ թէ ինքը հոգի ունի,—և ես դիտեմ, որ
նա երբէք իրաւոնք չի տալ ինձ հոգի ունենալու; եթէ մին-
չև անզամ ես որենէ հնարքով կարողանալի աճեցնել իմ մէջ
արդ...»: Լիօնէլի փոքրիկ ուղեղի մէջ հալել են, որ Աստուած
գոլութիւն չունի և ամեն բանի սկզբնապատճառը հիւլէն
է, որից առաջ են գալիս միւս հիւլէները, որոնք անդադար
ձևափոխուելով, անդիտակից, առանց մտածելու, միմիալն
նիւթի զօրութեամբ կազմում են աշխարհս. Ակսպիսի գաղա-
փարներով սնուած երեխան սաստիկ շփոթւում և մտատան-
ջութիւնների մէջ է ընկնում, երբ պատահմամբ ծանօթանա-
լով գերեզմանափոր Ռութէնի և նրա փոքրիկ աղջիկ Ժեսմի-
նալի հետ՝ լսում և տեսնում է՝ թէ ինչպէս նրանք հաւատում
են Աստուծուն, եկեղեցի են գնում և երջանիկ են. նա զգում
է, որ իւր սովորած սկզբունքների հիման վրայ ապրելը մի-
առանձին նպատակ չունի և ասում է հօրը. «Սս լոյնել եմ,
լոյնել եմ զրքերից և ամեն բանից. ինչ որ կալ նոցա մէջ՝
միալն խառնաշփոթութիւն... ուրիշ ոչինչ, և ինչու համար է ալ-
բոլորը. Կմնոնենք՝ և ամեն ինչ կմոռանանք, ինչ որ մի ժա-
մանակ գիտէինք... Ակնապէս որ աշխատանքն էլ իզուր և
գիտութիւն էլ աւելորդ է...»: Ակսպիսի մտածմունքներով
փոքրիկ Լիօնէլը մաշտում է. նրան չեն թոլլ տալիս տան-

պարտիզից դուրս գնայ, ուրիշ երեխաների հետ հաղորդակցութիւն ունենալ մարդն էլ, որ առաջ սիրում էր իւր զաւակին՝ հօր խստաբարութեան պատճառով հետզնեատ սառում է նրանից, նրանով չէ հետաքրքրում և մի գեղեցիկ օր էլ փախչում է տանից. Լիօնէլի վրալ սաստիկ ներգործում է ալդ զէպքը և նորա թոլլ, տկար մարմինն էլ չէ դիմանում. նա ուշաթափում, հիւանդանում է, Բժշկի խորհրդով Վելիսկուրտը դժկամակութեամբ Լիօնէլին ուսուցչի հետ ուղարկում է Կլեմերլի՝ թժշկուելու և հանգստանալու համար. Բուժարանում պրօֆ. Կադմօն Հօրը հետզեւտէ լաւ ծանօթանալով խոր սանի հետ և ուսումնասիրելով նրա հոգեկան տանջանքների և մըտքերի շփոթութեան պատճառները, համողում է, որ Վելիսկուրտի և իւր բռնած ընթացքը զիսովին սիսալ է և բացազնում է. «Ո՛րպիսի զարհուրելի ոճիր է՝ կրթել ալս մանուկին առանց որևէ հաւատալիքի», Քըսան օրուալ ընթացքում Լիօնէլը փոքր ինչ կաղդուրուելով՝ վերաղանում է կօմմօրտին. բայց այստեղ պատհան մի նոր դժբաղդութիւն բոլորովին ընկճում է մանուկ զիտնականին. Նրա սիրելի փոքրիկ ծեսմինան վախճանում է բկուռուցքից. Երբ Լիօնէլը սաստիկ վշտից ընկճուած չդիտէ թէ ինչ անէ, Ժեսմինալի հալր գերազմանափոր Խուրէնը հանգստացնում է նորան ասելով՝ թէ Ժեսմինան ալմէ հրեշտակների մօտ է, այստեղ աւելի լաւ կլինի նա. Թէպէտ նրա մարմինը պէտք է գնինք դերեղմանի մէջ, բայց նրա հոգին կենդանի է և իւր սիրելի մարդիկի մօտ է. Լիօնէլը գունատ դէմքով և դողալով պատասխանում է. «Ի՞ս ճշմարիս չէ—զա միայն անմիտ նախապաշտումն է. Աստուած չկալ. Յաւիտենական կեանք գութիւն չունի... Թշուառ, թշուառ մարդ... Միթէ դուք երթք ոչինչ չէք սովորել. Մանոււսնից լատոյ—չկալ ոչինչ... Չկալ Աստուած, կալ միայն—Հիւլէ, իսկ նորա համար—բոլորը մէկ էս. Նա երկար մտատանջութիւնների մէջ է ընկնում. միսկ եթէ քանկարծ ալնպէս պատահի, որ ալդ բոլոր գիտնականները սիմալում են... լանկարծ դուրս գալ, որ հէնց ալդ ձիւլէն է—Աստուած, իսկ Քրիստոսը—առասպիլ չէ, ալլ Ալն, Որի մասին ալնքան հրաշալի կերպով լալտնում է Աւետարա. Նը—ալդ գէպքում Ժեսմինան ալժմ—ալնաեղ է... ու ըովինետէ ալս կեանքից լետով կալ և մի ալլ կեանք... բայց բնչպէս, ինչպէս իմանան ճշմարտութիւնը. Ակս երկմառ.

թիւնը, հոգեկան տանջանքը իսեղճ երեխալի ուղեղն այն աստիճանի խառնաշփոթում են, որ նա վճռում է շուտով՝ անձամբ իմանալ ճշմարտութիւնը. նա վճռում է մեռնել և հաստատա. կամութեամբ իրադրում իւր վճիռը Խնդմ Լիօնէլը կախում է իւր սենեակում և ալզպիսով վերջ դնում Հիւլէի և Աստուծով գաղափարների հակադրութեանը. Քննիչ բժիշկը կարծիք է լալտում, որ երեխալին ալդ սարսափելի ոճիրը դործել է տուել ուղեղի կատարեալ լոգնածութիւնը, որ առաջացել է նրա ոլժերից շատ լիեր մտաւոր աշխատութիւններ ։ ունենալուց. իսկ պրօֆ. կադմոն—Հօրը համոզուած էր, որ ողաստի արակ չէ չական գործի մէջ ջրօնական սկզբունքների կատարեալ քայակալութիւնը, և «չ թէ մի աւլ բան, ալդ մատադ կեանքը կորստի հասցրեց».

Մենք ընթերցողին ներկալացրինք Հզօր Հիւլէի միան ծուծը. վէսի նկարադրութեան ձեզ գրաւիչ է և ընթերցողն երբէք չէ ճանձրանում կարզալուց. փոքրիկ, անմեղ մեսմինապի տիպը դուրս է բերուած շատ բնական. Վելիսկուրտի երկաթեալ բնաւորութիւնը զուտ անզլական սառնասըրատութիւն և քարասրատութիւն է ներկալացնում. ոչ կնոջ խալտառակ փախուստը, ոչ օրդու տանջանքն ու վաղահամ մահը չեն զրդուեցնում նրա համոզումները և նա մնում է դարձեալ նոյն անհաւատն ու անաստուածը. Վէսի մի խոշոր և միակ հոգեքանակ ան թերութիւնն է ներկալացնում այն հանգամանքը, որ վերև մեր առաջ բերած կրօնա—փիլիսոփալական դատողութիւնները, հաւատի, Աստուծու, անմահութեան և զուտ նիւթապաշտական սկզբունքի գաղափարների մասին ժառողը մի 11 տարեկան երեխալ է հանդիսանում. ալս անքնական է թւում մեղ, որքան որ Լիօնէլն ընդունակ և շատ քան սովորած լինէր:

Ինչ վերաբերում է հալերէն թարգմանութեանը, պէտք է ասենք, որ շատ լաջող է. թարգմանիչ Տ. Վ. դործ է ածում պահուն, կոկ հալերէն լեզու, երթմն համեմուած ժողովրդական—ճաշակով ընտրուած—և դրաբարակազմ բառերով.

Քանի որ, տարաբաղդաբար, մեղանում եմ երբեմն հրապարակով լալտուում են Ակրօնն պմբոխի համար է» և ալլ ապափիսի ալլանդակ մաքեր, խորհուրդ կտալինք ընթերցողներին դնել ալդ գիրքը և կարդալ. Գրքի հրատարակութեան ամբողջ արդիւնքը լատկացրած է հալ որբերին. ուրեմն և ալդ

գիրքը գնողները, բացի օգտակար բան կարդալուց, մի համակրելի և բարի նպատակի էլ կընպաստեն.

ԲԲԻԶ

Պրոֆ. Փ. Ռատցէլ. Տարերք ազգագրութեան. զերմ-թարգմ. Խ. Յարութիւննանց, Թիֆլիս. 1802. գ. 50 կ.

Պրօֆէսօր Ռատցէլը, Լաւացիզի համալսարանի աշխարհագրութեան անուանի ուսուցչապետը, լաւանի է իւր եռահատոր «Ազգագրութիւն» (Völkerkunde)՝ աշխատութեամբ, որ արդիւնք է իւր բազմաթիւ ճանապարհորդութեանց և վալյենի ազգերի կեանքի ուսումնասիրութեան:

Այս հիմնական աշխատութիւնը ժողովրդին աւելի մատչելի անելու համար՝ հեղինակը հրատարակել է գերմաներէն լեզուով դուռ համառատութիւնը «Ճարերք ազգագրութեան» վերնագըրով, որի թարգմանութիւնն է լոգուածիս վերնագիրը կրող աշխատութիւնը։ Գիրքը բաժանուած է միքանի դրույների, որնց մէջ ամենից հետաքրքրականը Դ. և Ե. գլուխներն են, «լեզուն» և «կրօնը», ուր հեղինակը մանրամասն հետազոտումէ լեզուների և կրօնների հոգեբանական ծագումը, ի նկատի ունենալով բնական կամ վալյենի սղերը։

Ազգագրական նիւթեր հաւաքելը մեղանում էլ բաւական տարիներ առաջ է սկսուել և այդ ճիւղի նահապետը իրաւամբ պէտք է համարել հանգուցեալ Գարեգին եպիս. Սրուանձտեանցին, որ զեռ վաթսունական թուականներին «Արծիւ Վասպուրական»-ի մէջ սկսել էր հետաքրքրական լոգուածներ հրատարակել մեր աշխարհի զանազան մասերի վերաբերեալ և իւր սիրուն, ճկուն և սահուն լեզուով հողի ու շունչ տալ անկինդան հալ ժողովրդին, նորա լեզուին ու սովորութիւններին, նորա զիր ու դպրութեան, նորա կենցաղին։ Սական աւազ, որ մի Սրուանձտեան միալն ունեցանք, նա եղաւ ալդ մասում առաջինը և վերջինը և չթողեց իւր լետեից ոչ մի արժանառ լաջորդ։

Մեր մէջ էլ ազգագրութեամբ զրազուողները պէտք է ուսումնասիրեն պր. Ռատցէլի աշխատութեան նման դրուածքներ, որպէս զի կարողանան հաւաքուած նիւթերը մշակել գիտութեան արդի պահանջների համաձայն։ Այս տեսակէտից